Գ. ՆԱՅԵՆՈՒՇԻ

ՈՒՐԱԽ ԱՇԽԱՏԱՎՈՐԸ

ԱՄՍԱԳԻՐ

1924

891.99
Հ-26

Գ. Ն.

1 8 NOV 2011

2030

891.99
Հ-26

ԳՈՒՐԳԷՆ ՀԱՑԿՈՒՆԻ

ՎՈՒԼԿԱՆՆԵՐԸ ԺԱՅԹՔՈՒՄ ԵՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

22-800

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ «ՄՈՒՐՃ ԵՒ ՄԱՆԳԱՂ»
ՄՕՍԿՎԱ 1924

2030

JUN 2013

ԱՐՏԱՏՊԻԱԾ Է «ՔՈՒՐԱ»-ԻՑ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ХАССР-Арм.ССР
им. А. Мясникяна
Ц. Ереван
6008-55



Հայկական ՍՍՀ Գրադարան
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
անվ. Մ. Մաշտոցի
Ս. Մեսրոպյան անվան

ՎՈՒԼԿԱՆՆԵՐԸ ԺԱՅԹՔՈՒՄ ԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՊՀ Գրադարան
ՀԱՅԿ ՍՍՀ
Ա. Մ. Հ. Մասիսյանի անվան

1

Ինչ ես վառել...

Ո՞ւր ես յառել աչքերդ հուր,
Շողարձակ...

Թո՛ղ որ պոռթկան յոյսերդ բիւր.
Մի՛ դողա։

Կրա՞կ չունիս կրծքիդ մէջ.
Թէ՞ հնոցդ մարելու է անածուխ։

Եւ ո՞վ է որ —
Պէտք է վառի,
Ու վառ պահի
Հազարամամ լամպաներդ էլէքտրիկ։

2

Եա՞րդ է...
Մի՛թէ։

Ունե՞ս Դու եար։

Ի՞նչ է եարը.
Դու գիտե՞ս։

Եղե՞լ է որ՝
Դու մէ՛կ... սիրես.
Սիրե՛ս.
Ու զէթ տանջւես...
Տանջւես միայն արբունքներից կուսական։

Ու չի՞ եղել,
Երբէ՞ք,
Երբէ՞ք —
Անանական լոկ տուփանքը հեշտասէր...

Չկա՞ նոր սէր Քո հոգում։

Գայթակղութեան այդ աչերդ —
Դո՛ւրս նետիր։

Որ կուրանաս։

Հա՜,
Զե՞ս ուզում,
Որ կուրօրէն խաւարի մէջ խարխափես։

Դէ՛,
Ուրեմն,
Փնտռի՛ր սէրը...

Անշուշտ մի օր...

Թէկուզ Վաղը
Քեզ վիճակւի լուծել նորից
Սիրո պրօբլէմն —

Ի՛Մ ԹՐՈՎ։

Եւ Դու գիտցի՛ր,
Որ Քո սիրուդ արշալոյսը պիտ շիկնի։

Հագի՛ր թեւեր սաւառնակի,
Պրոպէ՛լէր։

Զիւնագագաթ Արարատից,
Մոմբլանից ու Էլբրուսից էլ վե՛ր թռիր։

Եւ սիրուհու որոնումիդ տենչերով...

Կցի՛ր տենչիդ
Տիեզերքը —
Հազա՜ր, հազա՜ր արևով։

3

Տե՛ս.

Շողերը եօթնագոյն
Պլպլում են Նիագարա ջրվէժում։

Փա՜յլ են տալիս Ալագեազի լանջերին։

Էլ ի՞նչ փոյթ...

Եւ քանի որ
Ճառագայթներն հասել են քեզ Արևից.—

ՔՈ ԱՉՔԵՐԻ ՍԱՒԱՌՆԱԿԸ

Դէպի Արև,
Դէպի Կո՛սմոս թող ճեղքի։

ՆՊԱՏԱԿ ԿԱ՜։

Սակայն,
Լսի՛ր.

Թէ մրրի՛կ գա —
Իմ Երկիրը,
Իմ Աշխարհը Քեզ կայան։

Կայան չունի՛ս,
Նպատակիդ լուծում չունիս,

ԹԷ ԿՏՐԻԵՍ ԻՄ ՀՈՂԻՑ։

Իջի՛ր մի պահ։

Որ բարձրանաս,
Որ սլանաս անվրէպ.

Երբ Աշխարհը —

Ովկիանոսից Ովկիանոս,
Հինգ ցամաքներն իր մէջ գրկող
Հորիզոնից հորիզոն —

Լինի հասուն,
Լինի անդուլ Աշխատանքի

ՄԷԿ ՄԻԱՁՈՅԼ ԴԻՆԱՄՕ։

4

Ի՞ՆՉ ՄԻՏՔ Է ՈՐ...

Բայց մէկ ասա՛.

Ի՞նչ խոկումներ կնճռոտել են ճակատիդ։

Ճակատդ լայն.
Խորհրդաւոր տարեգի՞րն է ուղեղիդ.

ԿՆՃԻՌՆԵՐԴ
ՆՇԱՆՆԵ՞ՐՆ ԵՆ ՍԵՊԱԳԻՐ.
ՈՐ ՊԵՂԻԱԾ ԵՆ ԴԱՐԵՐՈՎ։

Թէ՞ —
Օր-պակաս էն դրոշմն է նզովքի,
Որ եռագոյն լաթերի մէջ զմռաւեց...
Ու խունցաւ։

Դու չը գիտե՞ս։

Թո՛ղ ճակատիդ տափաստանի
Դաշտերը,
Արդ,
Ուռճանան։

ԵՐԿՈՒ ԳԱԳԱԹ,

Ջիւնաշաղախ,
Թո՛ղ բարձրանան ամպերում։

Երակնե՛րդ –
Ծխնելոյզներ...

Պիտի ծխան
Ու մրոտին —
ՍՐՏԻՍ ՄԱԶՈՒԹ ՀՆՈՑԻՑ։

5

Սակայն,
Այսօր...

ՈՏՔԴ,
ԻՆՁՈ՞Ւ,
ԹԵՔԻԵԼ Է ԾՈՒՌ...

Բայց Դու,
Բնա՜ւ,
Զը սայթաքե՛ս գետն ի վար։

ԱԿԱՆՋՆԵ՜ՐԴ—
ՄԻ-ՄԻ ՊԱՀԱԿ.

Թո՛ղ որ հակեն
Ամեն շշուկ,
Ամեն հնչիւն խաւարի։

Սօսիաշար պուրակի մէջ
Դու չը նիրհե՜ս
Լուսնահար։

Դու կը կենա՛ս դիրքիդ վրան.

Միշտ զգա՜ստ։

Ու ըէնագէնեան ճառագայթներն
Աչերուդ—

Կէս գիշերուան ժամերին,
Կամ թէ կանուխ,
Լուսաբացին,

Միշտ վստահ,—

Թող թափանցե՜ն գետնի տակ։

Եւ տեսնես.

ՉԿԱ՜ ԳԱՂՏՆԻՔ ՔԵԶ ՀԱՄԱՐ։

Մութ խաւերում՝
Խլուրդները կը գտնե՛ս։

Բութ դաւերին
Դու գիտակ։

Հագիր զրահ.
Կապիր թո՜ւրս Հալումնի։

Ու կեցիր
Միշտ շիտա՜կ.

Անխոցելի՝
Քո թշնամու սլաքներից թունաւոր։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ս. Մեսրոպյան
անվան
6008-55

Բա՜յց...

Աքիլեան

ՔՈ ԿՐՈՒՆԿԸ,

Որ ունիս,

Դու դէ՛մ չը տաս
Ոսոխներիդ սլաքին։

Մինչև բաշխեմ

ՀԱԿԱԹՈՑՆԸ ԹՈՑՆԵՐԻ.

Որ կերտում եմ
Բուժարանիս դեղերից.

ՔԵ՛Զ ՀԱՄԱՐ։

6

Բայց չէ՞։

Տեսա,
ՈՐ ԿԱՍԿԱԾԻ
Մի դող անցաւ Քո դէմքով։

Թերահաւա՜տ...

Էլ ո՞ւր մնաց
Իմաստութեան Քո թռիչքը
Երկնահաս։

Ինչո՞ւ բացի ես ծալքերը ուղեղիդ։
Ինչո՞ւ դրի ես Իմ շունչը Քո հոգում։

Թրթռո՞ւմ է սրտիկդ։

Ցո՞ւրտը իջաւ։

Մե՛րկ ես
Մի թէ,
Որ սարսռես Դու ցրտից։

Մերկութիւնը փոյթ չէ՛—

Եթէ միայն չի՛ մերկացնում
Քո հոգին։

Գուցէ,
Ջերմն է,
Որ վարակել,
Որ բռնել է մարմինդ։

Թէ չէ.

Էլ ինչո՞ւ ես
ԱՏԱՄՆԵՐԴ ԽՓՈՒՄ ԻՐԱՐ...

Շրթունքներդ,
Ինչո՞ւ հապա
Դողդողում են ու կապտում...

Ի՞նչ ես ուզում.
Խի՞նին։
Ա՛ռ։

Բայց թէ ցրտի սարսուռ է այդ. —

Հնո՞ց ունիմ։

Որ պիտ ծխա,
Պիտի մխա
Միրիադ,
Միրիա՜դ տարիներ։

Ու տաքացնի
Քու կողերը.

Եւ մինչև իսկ.—
Ուղն ու ծուծը ոսկրերիդ։

Եւ դու չը լաս.
Ամօ՛թ է։

Արցունքներդ
Զսպի՛ր,
Զսպի՛ր։

Միևնոյն է.—

Թէ հեկեկաս արտասուաթոր,
Թէ շիթերդ իջնեն կաթ-կաթ,

Գիտցի՛ր,
Դրանք
Պէտք է իսկոյն շոգիանան
Ու ցնդեն.

ՀՆՈՑԻՍ ԹԷ՞Ժ ԲՈՑԵՐՈՎ։

7

Թէժ բոցերով
Կեռա կաթսան Իմ Երկրի։

Կաթսայիս մէջ շոգինե՛ր կան
Լեփ-լեցուն.

Գոյացել են Իմ Ովկիանի ջրերից։

Թո՛ղ որ եռա
Եւ արիւնդ կարմրահոս։

Զարկերակնե՛ր դ —

Թո՛ղ որ խփեն
Մուրճի պէս,
Անընդհատ.

ԹՈ՛Ղ ԲԱՐԶՐԱՆԱՆ ՈՒ ԻՋՆԵՆ...

Թո՛ղ որ կռեն ու կոփեն,
Ամեն վայրկեան, ակնթարթ —

Իմ աշխա՛րհը,

ՔԵ՛Զ ՀԱՄԱՐ։

Եւ շիկանաս միլիարդների զարկերից.
Զարկերը գոռ արձագանքեն
Քո կրծքում։

Զէ՛ որ,
Ընկե՛ր,
ԶԱՐԿԵՐԸ ԻՄ ՍԻՄՖՕՆԻԱՆ Է
Այս կեանքում.

Զէ՛ որ գիտեմ —
Թէ կուծքիդ մէջ
ՐԷԶՕՆԱՆՍ ԿԱ ԻՆՁ ՀԱՄԱՐ։

8

Եւ կանչիս հետ,
Ըէզոնանսով,
ՄԲԲԻԿՆԵՐԻՍ ՍԻՄՖՕՆԻԱՅԻՑ
ԴՈՒ ԾՆԻԵՑԻՐ։

Մբբիկ դարձար Այս Օրից։

Այսօր,
Ահա,
Տառապանքս է,
Որ,
Յորդացած,
Մբբկում է Քո հոգին։

Եւ ես գիտեմ,
Ու լա՜ւ գիտեմ.—

ՄԱՍՍԱՆԵՐԻ ԻՄ ՎԱՌ ՍԷՐՆ Է,
ՈՐ ԳԱՄՈՒՄ Է ՔԵԶ ՀՈՂԻՆ։

Թէ չէ,
Անշուշտ,
Ո՛չ ուշ,

ՎԱ՜ՂԸ,

Ի՞նչ է Հողը,
Որ ընդգրկի Քո ծփանքներն անեղեր։

Անեղեր է,
Անսահման է Տիեզեր։

Բայց...

Քո առաջ—
Կա՛
Վաղեմի մահու եզր.

ՄԱՀՈՒ Ե՜ԶՐ.

Որ ա՛րդ,
Թէկուզ կեանքիդ գնով,

Ու՞մինչև իսկ

ԸՆԴՎԶՈՒՄԻ
ՄԲԲԿԱՎԱՁ ԻՄ ԱՐՇԱՒՈՎ

Դու չե՛ս ջնջի։

Զե՞ս հաւատում։

Տես՛,
Քո առաջ
Կա՜ն պատնէշներ.

Զինականից ահռելի։

Ե՛ս չեմ քաշել Քո առաջ։
Եւ ես դրանք կը խորտակե՜մ Քո առաջ.—

ՎԱ՜ՂԸ...

Եւ դու կանցնես Ռուբիկօնը երկրային։
Թեակոխես աշխարհները
Իմ հոգու.
Իմ մտքի։

Աշխարհնե՜ր...

Որոնց ցոլքը, որոնց փայլը,
Արդէն,
Ամփոփուած են —

Իմ աչքերի ֆոկուսում։

Եւ թէ ուզես —
Իմ բիբերում կը կարդաս։

Բայց չէ՜...

Այսօր,
Դու պէտք է որ՝
ՊԱՏԳԱՄՆԵՐԻՍ ՀՐՁԻԳ ԴԱՌՆԱՍ...

Պրօժէ՜կտօր...

Խարո՛յկ վառես
Իմ մազութէ ջահերից։

Որ հրդեհես ֆակէլներով երկնային,
Հողն ու Ջուրը Իմ Երկրի։

9

Չկա՛ մի յոյս,
Չկա՛ մի լոյս,
Որ չը լինի Իմ կրծքում,
Որ չը բղխի Իմ կրծքից։

Չկա՜ մի դող,
Չկա՜ մի շող,
Եւ ո՛չ մի խոհ ու խոկում,
Որ չը ստանաս Դու Ինձնից։

Չկա՛ մի նիւթ,
Որ չը հալւի, որ չը ձուլւի Իմ մտքում։

Չկա՜ մի հիւթ,
Որ չը գտնես Իմ լաւայի զանգւածում։

Մի՛ տքս —
Անմահ Տիեզերքն է.
Շողշողում է արևներ։

Կրծքիս մէջն են —
Վուլկաննե՛րը,
Որ ժայթքել են խարոյկներ։

Խարոյկներս,
Դարէ ի դար,
Ես յղացա երկունքով...

Հրաբուղխներս,
Մի՞թէ,
Այսօր,
ՀԱՆԳՉԵԼՈՒ ԵՆ ՔՈ ԿԱՄՔՈՎ!

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ԱՄՆ.ՍՍՀ
Ա. ԿԱՄ. Ա. ՄԱՏՍՈՒՐԻՆԻ
ՍԱՄՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԱՄ ԸՆԿԵՐԱԿԱՆ ՅԱՆԿՈՒԹԵԱՄԲ ԵՌ
ԳՐԱՇԱՐԵՑ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ «ՄՈՒՐՃ ԵՒ ՄԱՆԳԱՂ»

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Г. АЙКУНИ . . . . . Титан (распрод.)
2. ՈՒՐՕՏ ՈՅՏՄԼԷՆ . . . . Բանաստեղծութ. (սպառ.)
3. Գ. ՀԱՅԿՈՒՆԻ . . . Դիշերային թիթեռնիկ (սպառ.)
4. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՂ. ՏԱՐԵԴԱՐՁԻՆ (սպառ.)
5. Գ. ՀԱՅԿՈՒՆԻ . . . . . Բանաստեղծութ. (սպառ.)
6. Ե. ՏԷՐ- ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ . . Քաղցի օրերին (սպառ.)
7. Վ. ՎԱՆԴԷԿ . . . . . Մէջ գրական գոնար
8. Մ. ԳՕՐԿԻ . . . . . Մայրը
9. Գ. ՊԼԵԽԱՆՕՎ . . Գեղարուեստը եւ հասար. կեանքը
10. «ՔՈՒՐԱ» № 1 . . . . . (սպառ.)
11. Գ. ՇԱՄՈՒՆՑ . . . . . Ճամփին
12. ՋԷԿ ԼՕՆԴՕՆ . . Երկաթէ կրունկը (պատկերազարդ.)
13. ԲԱՑԻԿՆԵՐ — Շահումեան, Պլեխանով, եւ ուրիշներ.
14. ՎԻԿՏՕՐ ՀԻԳՕ . . . . . 93 Թիվը
15. ԿՆՈՒՏ ՀԱՄՍՈՒՆ . . . . Երկրի հիւթերը (պատկ.)
16. ՈՒ. ՍԻՆԿԼԷՐ . . . . . Ջունգլի (պատկ.)
17. Գ. ՈՒԷԼՍ . . . . . Կոյրերի երկիրը
18. Ա. ԲՕԳԴԱՆՈՎ . . . . . Ինժէնէր Մէննի
19. «ՔՈՒՐԱ» № 2 . . . . . (սպառ.)
20. ԱՄԵՌ . . . . . Հրետանի
21. ԷՄԻԼ ԶՕԼԱ . . . . . Անխահատներ (պատկ.)
22. Գ. ՀԱՅԿՈՒՆԻ . . . . Վուլկանները ժայթքում են

ՏՊԱԳՐԻՈՒՄ ԵՆ

23. Մ. ՄԱՋՄԱՆԵԱՆ . . . . . Ժորժ Գրոսս
24. ԱՐՈՒՍԻ . . . . . Յակոբ Յակոբեան

Դիմել.—Москва, Мясницкая, Армянский 2.
Арм. издательство „СЕРП и МОЛОТ“

Типография „СЕРП и МОЛОТ“
Армянский пер., д. 2. Телефон 2-78-28

Главлит № 15923 Тираж 1000.

«Ազգային գրադարան»
NL0342954

37914

ՇԱՊԻԿԸ—ԳԵՈՐԳ ՔՈՉԱՐԻ